ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

# Հ Ր Ա Մ Ա Ն

«02» «հոկտեմբերի» 2026 թվական № 644-Լ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 10-Ի N 6-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով, «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 5-րդ հոդվածով, վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշման հավելված 26-րդ կետի 11-րդ ենթակետով և հիմք ընդունելով վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի ղեկավարի 2026 թվականի հոկտեմբերի 1-ի N /45.7/33706 գրությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1.Շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղարի 2020 թվականի հունվարի 10-ի «Շրջակա միջավայրի նախարարության քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու և բնապահպանության նախարարության գլխավոր քարտուղարի 2018 թվականի օգոստոսի 15-ի N 476-Լ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 6-Լ հրամանում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Հրամանով հաստատված 349-րդ հավելվածում՝ շրջակա միջավայրի նախարարության կլիմայական քաղաքականության վարչության պետի (ծածկագիր՝ 15-32.5-Ղ3-2) պաշտոնի անձնագրի **«2. Պաշտոնի բնութագիրը» գլխի «2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները»** կետը շարադրել նոր խմբագրությամբ.

| 2. Պաշտոնի բնութագիրը |
| --- |
| **2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները**<br>1. ապահովում է կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության պետական քաղաքականության, ծրագրերի, ռազմավարությունների, իրավական ակտերի նախագծերի, ուղեցույցների մշակումը, և դրանց իրականացման գործընթացը, |

2. ապահովում է մասնակցություն կլիմայի փոփոխությանը վերաբերող միջազգային կոնվենցիաներով, պայմանագրերով ու համաձայնագրերով սահմանված դրույթների և պարտավորությունների, դրանց շրջանակներում ընդունված որոշումների կատարմանը,

3. ապահովում է Կլիմայի փոփոխության հարցերով խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) քարտուղարության գործառույթների իրականացումը,

4. ապահովում է մասնակցություն կլիմայի փոփոխության վերաբերյալ միջազգային կոնվենցիաների, պայմանագրերի ու համաձայնագրերի նախագծերի մշակմանը,

5. ապահովում է կլիմայի փոփոխությանը վերաբերող միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների կատարմանն ուղղված մեխանիզմների ներդրման վերաբերյալ առաջարկությունների մշակումը,

6. ապահովում է ջերմոցային գազերի պետական հաշվառման սկզբունքների ու կարգերի նախագծերի մշակումը՝ Կլիմայի Փոփոխության Միջկառավարական Խմբի/IPCC կողմից հաստատված ուղեցույցերի համաձայն,

7. ապահովում է մասնակցություն կլիմայի փոփոխությանն ուղղված միջազգային համագործակցության և միջազգային պարտավորությունների կատարմանը, միջազգային պայմանագրերի մշակմանը,

8. ապահովում է կլիմայի փոփոխության հայեցակարգի և հիմնադրույթների մշակումը և կատարելագործումը, ինչպես նաև այդ բնագավառում նորմատիվ բնույթի իրավական ակտերի մշակման վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը,

9. ապահովում է մասնակցություն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով համապատասխան վիճակագրական հաշվետվությունների (հարցաթերթեր, տեղեկանքներ և այլն) ներդրմանը և դրանց միջոցով հավաքագրված տվյալների ու տեղեկությունների հիման վրա վարչական վիճակագրական ռեգիստրների վարմանը՝ կլիմայի փոփոխության մասով,

10. ապահովում է մասնակցություն կլիմայի փոփոխությանն ուղղված միջազգային ծրագրերի նախագծերի մշակմանը, Նախարարություն ներկայացված ծրագրերի նախագծերի ուսումնասիրմանը, և դրանց վերաբերյալ կարծիքի տրամադրմանը,

11. ապահովում է մասնակցություն կանաչ տնտեսության խթանմանն ուղղված քաղաքականության մշակման ու իրականացման գործընթացին՝ իր իրավասությունների շրջանակում,

12. ապահովում է մասնակցություն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտման հետևանքով շրջակա միջավայրին հասցված վնասի հաշվարկման մեթոդների մշակման աշխատանքներին՝ Վարչության իրավասությունների սահմաններում,

13. ապահովում է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության շրջանակներում Վարչության գործառույթների մասով մասնագիտական կարծիքի տրամադրումը,

14. ապահովում է մասնակցություն նորմատիվ իրավական ակտերի նախագծերի՝ շրջակա միջավայրի բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման եզրակացության տրամադրման գործընթացին,

15. ապահովում է մասնակցություն էկոլոգիական իրազեկման, մշակույթի, դաստիարակության քաղաքականության, ծրագրերի և ռազմավարությունների, էկոլոգիական գիտության և կրթության ռազմավարության հիմնական ուղղությունների մշակմանը,

16. ապահովում է այլ մարմինների կողմից մշակված և Նախարարության համաձայնեցմանը ներկայացված իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ առաջարկությունների և առարկությունների տրամադրումը՝ կանոնադրությամբ Վարչությանը վերապահված իրավասությունների սահմաններում,

17. ապահովում է մասնակցություն Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի՝ շրջակա միջավայրի ոլորտին վերաբերող բաժինների, և կառավարության գործունեության միջոցառումների ծրագրի մշակման գործընթացին,

18. ապահովում է մասնակցություն կլիմայի փոփոխությանն առնչվող շրջակա միջավայրի պահպանության բնագավառում պետական ծրագրերի մշակման և պետական պատվերի՝ սահմանված կարգով ձևավորման աշխատանքներին,

19. ապահովում է մասնակցություն քաղաքացիների առաջարկությունների, դիմումների, բողոքների սահմանված կարգով քննարկմանը և պատասխանների տրամադրման գործընթացին,

20. ապահովում է կանոնադրությամբ Վարչությանը վերապահված իրավասությունների սահմաններում Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի, նախարարական կոմիտեների օրակարգերում ընդգրկված հարցերի ուսումնասիրում և ըստ անհրաժեշտության դրանց վերաբերյալ տեղեկանքների կազմումը,

21. ապահովում է մասնակցություն Նախարարության գործունեության տարեկան և ընթացիկ գործունեության ամփոփ հաշվետվությունների կազմման գործընթացին,

22. ապահովում է Վարչության աշխատանքային ծրագրերի ու Վարչության կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունների կազմումը:

**Իրավունքները՝**

- օգտվել տարբեր հնարավոր տեղեկատվական աղբյուրներից, պետական և ոչ պետական կառույցների, միջազգային կազմակերպությունների հետ համագործակցելու միջոցով ծանոթանալ միջազգային փորձին,
- այլ մարմիններից, պաշտոնատար անձանցից, ինչպես նաև Նախարարության այլ ստորաբաժանումներից իր պարտավորությունների իրականացման հետ կապված անհրաժեշտ տեղեկատվություն և նյութեր պահանջել և ստանալ,
- խորհրդակցություններ, քննարկումներ կազմակերպելու վերաբերյալ առաջարկություն ներկայացնել,
- ոլորտային քաղաքականության ձևավորմանն ուղղված գործողությունները և ծագած խնդիրները քննարկել, դրանց վերացմանն ուղղված առաջարկություններ ներկայացնել,
- շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ներկայացված նախագծերի ուսումնասիրության արդյունքում վերհանված ոլորտային անհամապատասխանությունների վերացման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնել և քննարկել,
- սահմանված կարգով ներկայացված վիճակագրական հաշվետվությունները (հարցաթերթեր, տեղեկանքներ և այլն) ուսումնասիրել և վերլուծել, հավաքագրված տվյալների

ու տեղեկությունների հիման վրա վարչական վիճակագրական ռեգիստրների վարման ընթացակարգերի վերաբերյալ կլիմայի փոփոխության մասով առաջարկություններ ներկայացնել, քննարկել,

- ջերմոցային գազերի արտանետումների հաշվառման գործընթացի կազմակերպման հետ կապված անհրաժեշտ տեղեկատվություն և նյութեր ստանալ,
- իրավական ակտերի նախագծերի մշակման գործընթացում ի հայտ եկած խնդիրներ քննարկել և դրանց վերացմանն ուղղված առաջարկություններ ներկայացնել,
- Նախարարության համաձայնեցմանը ներկայացված իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ այլ ստորաբաժանումներից տեղեկատվություն ստանալ, կարծիքների ամփոփման ընթացքում ի հայտ եկած խնդիրներ քննարկել այլ ստորաբաժանումների և վերադասի հետ և դրանց վերացմանն ուղղված առաջարկություններ ներկայացնել,
- ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով գերատեսչություններից և կազմակերպություններից տեղեկատվություն պահանջել և ստանալ՝ նշված կոնվենցիայի հաշվետվությունների մշակման և կոնվենցիայի քարտուղարություն ներկայացնելու համար:

**Պարտականությունները՝**

- մշակել ջերմոցային գազերի արտանետումների կառավարման, ինչպես նաև կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության պետական քաղաքականությունը,
- ոլորտի օրենսդրական դաշտի ուսումնասիրության, վերլուծության և ոլորտում առկա բացերի ու անհամապատասխանությունների բացահայտման, վերհանման, քննարկման աշխատանքներ կազմակերպել,
- այլ մարմինների կողմից մշակված և Նախարարության համաձայնեցմանը ներկայացված իրավական ակտերի և միջազգային ծրագրերի նախագծերի վերաբերյալ կարծիք տրամադրել,
- միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների կատարմանն ուղղված օրենսդրական դաշտը մոտարկել,
- ջերմոցային գազերի արտանետումների հաշվառման համար շահագրգիռ գերատեսչություններից և կազմակերպություններից տեղեկատվություն հավաքագրել, վերլուծել, հաշվառել և սահմանված կարգով ու ժամկետում ներկայացնել,
- հետևել Խորհրդի գործավարության իրականացմանը և աշխատանքների ամենօրյա սպասարկմանը, նախապատրաստել նիստի օրակարգը,
- Խորհրդի նախագահի, անդամների, միջգերատեսչական աշխատանքային խմբերի, պետական կառավարման և այլ իրավաբանական և ֆիզիկական անձանց միջև կազմակերպել նամակագրության իրականացում,

հետևել Խորհրդի նիստերի արձանագրությունների վարմանը, հաշվետվությունների կազմմանը, սահմանված կարգով արձանագրությունների և հաշվետվությունների հրապարակայնությունը Շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական կայքում, նաև տրամադրել ոլորտը համակարգող փոխվարչապետի գրասենյակին՝ կառավարության պաշտոնական կայքում հրապարակելու նպատակով:

2) Հրամանով հաստատված 351-րդ հավելվածում՝ շրջակա միջավայրի նախարարության կլիմայական քաղաքականության վարչության գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 15-32.5-Մ2-8) պաշտոնի անձնագրի **«2. Պաշտոնի բնութագիրը» գլխի «2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները»** կետը շարադրել նոր խմբագրությամբ.

**2. Պաշտոնի բնութագիրը**

**2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները**

1. իրականացնում է կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության պետական քաղաքականության, ծրագրերի, ռազմավարությունների, իրավական ակտերի նախագծերի, ուղեցույցների մշակումը, և դրանց իրականացման գործընթացը,

2. մասնակցում է կլիմայի փոփոխությանը վերաբերող միջազգային կոնվենցիաներով, պայմանագրերով ու համաձայնագրերով սահմանված դրույթների և պարտավորությունների, դրանց շրջանակներում ընդունված որոշումների կատարմանը,

3. իրականացնում է Կլիմայի փոփոխության հարցերով խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) քարտուղարության գործառույթները,

4. մասնակցում է կլիմայի փոփոխության վերաբերյալ միջազգային կոնվենցիաների, պայմանագրերի ու համաձայնագրերի նախագծերի մշակմանը,

5. իրականացնում է կլիմայի փոփոխությանը վերաբերող միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների կատարմանն ուղղված մեխանիզմների ներդրման վերաբերյալ առաջարկությունների մշակումը,

6. իրականացնում է ջերմոցային գազերի պետական հաշվառման սկզբունքների ու կարգերի նախագծերի մշակումը՝ Կլիմայի Փոփոխության Միջկառավարական Խմբի/IPCC կողմից հաստատված ուղեցույցերի համաձայն,

7. մասնակցում է կլիմայի փոփոխությանն ուղղված միջազգային համագործակցության և միջազգային պարտավորությունների կատարման ապահովմանը, միջազգային պայմանագրերի մշակմանը,

8. իրականացնում է կլիմայի փոփոխության հայեցակարգի և հիմնադրույթների մշակումը և կատարելագործումը, ինչպես նաև այդ բնագավառում նորմատիվ բնույթի իրավական ակտերի մշակման վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը,

9. մասնակցում է օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով համապատասխան վիճակագրական հաշվետվությունների (հարցաթերթեր, տեղեկանքներ և այլն) ներդրմանը և դրանց միջոցով հավաքագրված տվյալների ու տեղեկությունների հիման վրա վարչական վիճակագրական ռեգիստրների վարմանը՝ կլիմայի փոփոխության մասով,

10. մասնակցում է կլիմայի փոփոխությանն ուղղված միջազգային ծրագրերի նախագծերի մշակմանը, Նախարարություն ներկայացված ծրագրերի նախագծերի ուսումնասիրմանը, և դրանց վերաբերյալ կարծիքի տրամադրմանը,

11. մասնակցում է կանաչ տնտեսության խթանմանն ուղղված քաղաքականության մշակման ու իրականացման գործընթացին՝ իր իրավասությունների շրջանակում,

12. մասնակցում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտման հետևանքով շրջակա միջավայրին հասցված վնասի հաշվարկման մեթոդների մշակման աշխատանքներին՝ Վարչության իրավասությունների սահմաններում,

13. իրականացնում է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության շրջանակներում Վարչության գործառույթների մասով մասնագիտական կարծիքի տրամադրումը,

14. մասնակցում է նորմատիվ իրավական ակտերի նախագծերի՝ շրջակա միջավայրի բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման եզրակացության տրամադրման գործընթացին,

15. մասնակցում է էկոլոգիական իրազեկման, մշակույթի, դաստիարակության քաղաքականության, ծրագրերի և ռազմավարությունների, էկոլոգիական գիտության և կրթության ռազմավարության հիմնական ուղղությունների մշակմանը,

16. իրականացնում է այլ մարմինների կողմից մշակված և Նախարարության համաձայնեցմանը ներկայացված իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ առաջարկությունների և առարկությունների տրամադրումը՝ կանոնադրությամբ Վարչությանը վերապահված իրավասությունների սահմաններում,

17. մասնակցում է Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի՝ շրջակա միջավայրի ոլորտին վերաբերող բաժինների, և կառավարության գործունեության միջոցառումների ծրագրի մշակման գործընթացին,

18. մասնակցում է կլիմայի փոփոխությանն առնչվող շրջակա միջավայրի պահպանության բնագավառում պետական ծրագրերի մշակման և պետական պատվերի՝ սահմանված կարգով ձևավորման աշխատանքներին,

19. մասնակցում է քաղաքացիների առաջարկությունների, դիմումների, բողոքների սահմանված կարգով քննարկմանը և պատասխանների տրամադրման գործընթացին,

20. իրականացնում է կանոնադրությամբ Վարչությանը վերապահված իրավասությունների սահմաններում Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի, նախարարական կոմիտեների օրակարգերում ընդգրկված հարցերի ուսումնասիրում և ըստ անհրաժեշտության դրանց վերաբերյալ տեղեկանքների կազմումը,

21. մասնակցում է Նախարարության գործունեության տարեկան և ընթացիկ գործունեության ամփոփ հաշվետվությունների կազմման գործընթացին,

22. իրականացնում է Վարչության աշխատանքային ծրագրերի ու Վարչության կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունների կազմում:

**Իրավունքները՝**

- ջերմոցային գազերի արտանետումների կառավարման, ինչպես նաև կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության ոլորտի իրավական դաշտում ի հայտ եկած խնդիրների, բացերի վերացմանն ուղղված առաջարկություններ ներկայացնել վերադասին,
- ուսումնասիրել միջազգային փորձը և դրա ներդրմանն ուղղված առաջարկություններ ներկայացնել և քննարկել,
- մասնակցել աշխատաժողովներին, քննարկումներին այլ գերատեսչությունների մասնագետների, միջազգային փորձագետների հետ,

• շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ներկայացված նախագծերի ուսումնասիրության արդյունքում վերհանված ոլորտային անհամապատասխանությունների վերացման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնել և քննարկել,

• սահմանված կարգով ներկայացված վիճակագրական հաշվետվությունների (հարցաթերթեր, տեղեկանքներ և այլն) ուսումնասիրել և վերլուծել, հավաքագրված տվյալների ու տեղեկությունների հիման վրա վարչական վիճակագրական ռեգիստրների վարման ընթացակարգերի վերաբերյալ կլիմայի փոփոխության մասով առաջարկությունների ներկայացնել, քննարկել,

• կատարել կոնվենցիաների պարտավորություններից բխող աշխատանքներ:

**Պարտականությունները՝**

• ջերմոցային գազերի արտանետումների կառավարման, ինչպես նաև կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության ոլորտում առկա բացերը և անհամապատասխանությունները շտկելու, օրենսդրական դաշտը կատարելագործելու նպատակով ռազմավարական փաստաթղթեր, իրավական ակտերի նախագծեր մշակել.

• օրենսդրությամբ սահմանված կարգով շրջանառված նախագծերի վերաբերյալ նախարարության ստորաբաժանումներից և շահագրգիռ գերատեսչություններից ստացված կարծիքները վերլուծել, ամփոփել և քննարկել, անհրաժեշտության դեպքում մշակված նախագիծը լրամշակել, սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել.

• ուսումնասիրել այլ մարմինների կողմից մշակված և Նախարարության համաձայնեցմանը ներկայացված իրավական ակտերի և միջազգային ծրագրերի նախագծերը և տալ կարծիք.

• տվյալ միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների կատարմանն ուղղված առաջարկություններ, տեղեկատվություն տրամադրել.

• միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների կատարմանն ուղղված օրենսդրական դաշտը մոտարկել.

• շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ներկայացված նախագծերը համապատասխանեցնել իրավական ակտերով ամրագրված պահանջներին և նախագծերի վերաբերյալ մասնագիտական եզրակացություն պատրաստել.

• սպասարկել Խորհրդի գործավարությունը,

• վարել նամակագրություն Խորհրդի նախագահի, անդամների, միջգերատեսչական աշխատանքային խմբերի, պետական կառավարման և այլ իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ,

• արձանագրել Խորհրդի նիստերը, կազմել հաշվետվություններ, սահմանված կարգով Շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական կայքում հրապարակել արձանագրություններ և հաշվետվություններ, տրամադրել ոլորտը համակարգող փոխվարչապետի գրասենյակին՝ կառավարության պաշտոնական կայքում հրապարակելու նպատակով:

3) Հրամանով հաստատված 353-րդ հավելվածում՝ շրջակա միջավայրի նախարարության կլիմայական քաղաքականության վարչության ավագ մասնագետի (ծածկագիր՝ 15-32.5-Մ4-4) պաշտոնի անձնագրի **«2. Պաշտոնի բնութագիրը» գլխի «2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները»** կետը շարադրել նոր խմբագրությամբ.

## 2. Պաշտոնի բնութագիրը

**2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները**

1. մասնակցում է կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության պետական քաղաքականության, ծրագրերի, ռազմավարությունների, իրավական ակտերի նախագծերի, ուղեցույցների մշակմանը, և դրանց իրականացման գործընթացի ապահովմանը,

2. մասնակցում է կլիմայի փոփոխությանը վերաբերող միջազգային կոնվենցիաներով, պայմանագրերով ու համաձայնագրերով սահմանված դրույթների և պարտավորությունների, դրանց շրջանակներում ընդունված որոշումների կատարմանը,

3. մասնակցում է Կլիմայի փոփոխության հարցերով խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) քարտուղարության գործառույթների իրականացմանը,

4. մասնակցում է կլիմայի փոփոխության վերաբերյալ միջազգային կոնվենցիաների, պայմանագրերի ու համաձայնագրերի նախագծերի մշակմանը,

5. մասնակցում է կլիմայի փոփոխությանը վերաբերող միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների կատարմանն ուղղված մեխանիզմների ներդրման վերաբերյալ առաջարկությունների մշակմանը,

6. մասնակցում է ջերմոցային գազերի պետական հաշվառման սկզբունքների ու կարգերի նախագծերի մշակմանը՝ Կլիմայի Փոփոխության Միջկառավարական Խմբի/IPCC կողմից հաստատված ուղեցույցերի համաձայն,

7. մասնակցում է կլիմայի փոփոխությանն ուղղված միջազգային համագործակցության և միջազգային պարտավորությունների կատարման ապահովմանը, միջազգային պայմանագրերի մշակմանը,

8. մասնակցում է կլիմայի փոփոխության հայեցակարգի և հիմնադրույթների մշակմանը և կատարելագործմանը, ինչպես նաև այդ բնագավառում նորմատիվ բնույթի իրավական ակտերի մշակման վերաբերյալ առաջարկությունների ներկայացմանը,

9. մասնակցում է օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով համապատասխան վիճակագրական հաշվետվությունների (հարցաթերթեր, տեղեկանքներ և այլն) ներդրմանը և դրանց միջոցով հավաքագրված տվյալների ու տեղեկությունների հիման վրա վարչական վիճակագրական ռեգիստրների վարմանը՝ կլիմայի փոփոխության մասով,

10. մասնակցում է կլիմայի փոփոխությանն ուղղված միջազգային ծրագրերի նախագծերի մշակմանը, Նախարարություն ներկայացված ծրագրերի նախագծերի ուսումնասիրմանը, և դրանց վերաբերյալ կարծիքի տրամադրմանը,

11. մասնակցում է կանաչ տնտեսության խթանմանն ուղղված քաղաքականության մշակման ու իրականացման գործընթացին՝ իր իրավասությունների շրջանակում,

12. մասնակցում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտման հետևանքով շրջակա միջավայրին հասցված վնասի հաշվարկման մեթոդների մշակման աշխատանքներին՝ Վարչության իրավասությունների սահմաններում,

13. մասնակցում է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության շրջանակներում Վարչության գործառույթների մասով մասնագիտական կարծիքի տրամադրմանը,

14. մասնակցում է նորմատիվ իրավական ակտերի նախագծերի՝ շրջակա միջավայրի բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման եզրակացության տրամադրման գործընթացին,

15. մասնակցում է էկոլոգիական իրազեկման, մշակույթի, դաստիարակության քաղաքականության, ծրագրերի և ռազմավարությունների, էկոլոգիական գիտության և կրթության ռազմավարության հիմնական ուղղությունների մշակմանը,

16. մասնակցում է այլ մարմինների կողմից մշակված և Նախարարության համաձայնեցմանը ներկայացված իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ առաջարկությունների և առարկությունների տրամադրմանը՝ կանոնադրությամբ Վարչությանը վերապահված իրավասությունների սահմաններում,

17. մասնակցում է Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի՝ շրջակա միջավայրի ոլորտին վերաբերող բաժինների, և կառավարության գործունեության միջոցառումների ծրագրի մշակման գործընթացին,

18. մասնակցում է կլիմայի փոփոխությանն առնչվող շրջակա միջավայրի պահպանության բնագավառում պետական ծրագրերի մշակմանը և պետական պատվերի՝ սահմանված կարգով ձևավորման աշխատանքներին,

19. մասնակցում է քաղաքացիների առաջարկությունների, դիմումների, բողոքների սահմանված կարգով քննարկմանը և պատասխանների տրամադրման գործընթացին,

20. մասնակցում է կանոնադրությամբ Վարչությանը վերապահված իրավասությունների սահմաններում Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի, նախարարական կոմիտեների օրակարգերում ընդգրկված հարցերի ուսումնասիրմանը և ըստ անհրաժեշտության դրանց վերաբերյալ տեղեկանքների կազմմանը,

21. մասնակցում է Նախարարության գործունեության տարեկան և ընթացիկ գործունեության ամփոփ հաշվետվությունների կազմման գործընթացին,

22. մասնակցում է Վարչության աշխատանքային ծրագրերի ու Վարչության կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունների կազմմանը:

**Իրավունքները՝**

- ուսումնասիրել ջերմոցային գազերի արտանետումների կառավարման, ինչպես նաև կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության ոլորտի իրավական դաշտի միջազգային փորձը,
- ներկայացնել միջազգային փորձի ներդրմանն ուղղված առաջարկություններ և մասնակցել քննարկմանը,
- մասնակցել աշխատաժողովներին, քննարկումներին այլ գերատեսչությունների մասնագետների, միջազգային փորձագետների հետ,

• ներկայացնել շրջակա միավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ներկայացված նախագծերի ուսումնասիրության արդյունքում վերհանված ոլորտային անհամապատասխանությունների վերացման վերաբերյալ առաջարկություններ և մասնակցել քննարկմանը,

• մասնակցել կոնվենցիաների պարտավորություններից բխող աշխատանքների կատարմանը:

**Պարտականությունները՝**

• մասնակցել ջերմոցային գազերի արտանետումների կառավարման, ինչպես նաև կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության ոլորտում առկա բացերը և անհամապատասխանությունները շտկելու, օրենսդրական դաշտը կատարելագործելու նպատակով ռազմավարական փաստաթղթերի, իրավական ակտերի նախագծերի մշակմանը,

• մասնակցել օրենսդրությամբ սահմանված կարգով շրջանառված նախագծերի վերաբերյալ նախարարության ստորաբաժանումներից և շահագրգիռ գերատեսչություններից ստացված կարծիքների վերլուծությանը, ամփոփմանը և քննարկմանը, անհրաժեշտության դեպքում մշակված նախագծի լրամշակմանը,

• ուսումնասիրել այլ մարմինների կողմից մշակված և Նախարարության համաձայնեցմանը ներկայացված իրավական ակտերի և միջազգային ծրագրերի նախագծերը և մասնակցել կարծիքի ձևավորմանը,

• տրամադրել տվյալ միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների կատարմանն ուղղված առաջարկություններ և տեղեկատվություն,

• մասնակցել միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների կատարմանն ուղղված օրենսդրական դաշտի մոտարկմանը,

• մասնակցել շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ներկայացված նախագծերի վերաբերյալ մասնագիտական եզրակացության պատրաստմանը՝ իրավական ակտերով ամրագրված պահանջներին համապատասխան,

• մասնակցել ջերմոցային գազերի արտանետումների հաշվառման համար շահագրգիռ գերատեսչություններից և կազմակերպություններից տեղեկատվության հավաքագրմանը, վերլուծությանը, հաշվառմանը,

• տրամադրել դիմում/բողոքներով հայցվող համապատասխան տեղեկատվություն.

• հավաքագրել փաստաթղթեր, կազմել հաշվետվություններ՝ Խորհրդի գործավարության իրականացման համար,

• մասնակցել Խորհրդի աշխատանքային խմբերի, պետական կառավարման և այլ իրավաբանական և ֆիզիկական անձանց միջև նամակագրության իրականացմանը,

• արձանագրել Խորհրդի նիստերը, կազմել հաշվետվություններ, սահմանված կարգով մասնակցել արձանագրությունների և հաշվետվությունների հրապարակմանը,

• իրականացնել Վարչությանը վերաբերող փաստաթղթերի թարգմանություններ:

4) Հրամանով հաստատված 449-րդ հավելվածում՝ շրջակա միջավայրի նախարարության կլիմայական քաղաքականության վարչության գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 15-32.5-Մ2-

9) պաշտոնի անձնագրի «**2. Պաշտոնի բնութագիրը» գլխի «2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները»** կետը շարադրել նոր խմբագրությամբ.

**2. Պաշտոնի բնութագիրը**

**2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները**

1. իրականացնում է կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության պետական քաղաքականության, ծրագրերի, ռազմավարությունների, իրավական ակտերի նախագծերի, ուղեցույցների մշակումը, և դրանց իրականացման գործընթացը,

2. մասնակցում է կլիմայի փոփոխությանը վերաբերող միջազգային կոնվենցիաներով, պայմանագրերով ու համաձայնագրերով սահմանված դրույթների և պարտավորությունների, դրանց շրջանակներում ընդունված որոշումների կատարմանը,

3. իրականացնում է Կլիմայի փոփոխության հարցերով խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) քարտուղարության գործառույթները,

4. մասնակցում է կլիմայի փոփոխության վերաբերյալ միջազգային կոնվենցիաների, պայմանագրերի ու համաձայնագրերի նախագծերի մշակմանը,

5. իրականացնում է կլիմայի փոփոխությանը վերաբերող միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների կատարմանն ուղղված մեխանիզմների ներդրման վերաբերյալ առաջարկությունների մշակումը,

6. իրականացնում է ջերմոցային գազերի պետական հաշվառման սկզբունքների ու կարգերի նախագծերի մշակումը՝ Կլիմայի Փոփոխության Միջկառավարական Խմբի/IPCC կողմից հաստատված ուղեցույցերի համաձայն,

7. մասնակցում է կլիմայի փոփոխությանն ուղղված միջազգային համագործակցության և միջազգային պարտավորությունների կատարման ապահովմանը, միջազգային պայմանագրերի մշակմանը,

8. իրականացնում է կլիմայի փոփոխության հայեցակարգի և հիմնադրույթների մշակումը և կատարելագործումը, ինչպես նաև այդ բնագավառում նորմատիվ բնույթի իրավական ակտերի մշակման վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը,

9. մասնակցում է օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով համապատասխան վիճակագրական հաշվետվությունների (հարցաթերթեր, տեղեկանքներ և այլն) ներդրմանը և դրանց միջոցով հավաքագրված տվյալների ու տեղեկությունների հիման վրա վարչական վիճակագրական ռեգիստրների վարմանը՝ կլիմայի փոփոխության մասով,

10. մասնակցում է կլիմայի փոփոխությանն ուղղված միջազգային ծրագրերի նախագծերի մշակմանը, Նախարարություն ներկայացված ծրագրերի նախագծերի ուսումնասիրմանը, և դրանց վերաբերյալ կարծիքի տրամադրմանը,

11. մասնակցում է կանաչ տնտեսության խթանմանն ուղղված քաղաքականության մշակման ու իրականացման գործընթացին՝ իր իրավասությունների շրջանակում,

12. մասնակցում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտման հետևանքով շրջակա միջավայրին հասցված վնասի հաշվարկման մեթոդների մշակման աշխատանքներին՝ Վարչության իրավասությունների սահմաններում,

13. իրականացնում է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության շրջանակներում Վարչության գործառույթների մասով մասնագիտական կարծիքի տրամադրումը,

14. մասնակցում է նորմատիվ իրավական ակտերի նախագծերի՝ շրջակա միջավայրի բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման եզրակացության տրամադրման գործընթացին,

15. մասնակցում է էկոլոգիական իրազեկման, մշակույթի, դաստիարակության քաղաքականության, ծրագրերի և ռազմավարությունների, էկոլոգիական գիտության և կրթության ռազմավարության հիմնական ուղղությունների մշակմանը,

16. իրականացնում է այլ մարմինների կողմից մշակված և Նախարարության համաձայնեցմանը ներկայացված իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ առաջարկությունների և առարկությունների տրամադրումը՝ կանոնադրությամբ Վարչությանը վերապահված իրավասությունների սահմաններում,

17. մասնակցում է Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի՝ շրջակա միջավայրի ոլորտին վերաբերող բաժինների, և կառավարության գործունեության միջոցառումների ծրագրի մշակման գործընթացին,

18. մասնակցում է կլիմայի փոփոխությանն առնչվող շրջակա միջավայրի պահպանության բնագավառում պետական ծրագրերի մշակման և պետական պատվերի՝ սահմանված կարգով ձևավորման աշխատանքներին,

19. մասնակցում է քաղաքացիների առաջարկությունների, դիմումների, բողոքների սահմանված կարգով քննարկմանը և պատասխանների տրամադրման գործընթացին,

20. իրականացնում է կանոնադրությամբ Վարչությանը վերապահված իրավասությունների սահմաններում Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի, նախարարական կոմիտեների օրակարգերում ընդգրկված հարցերի ուսումնասիրում և ըստ անհրաժեշտության դրանց վերաբերյալ տեղեկանքների կազմումը,

21. մասնակցում է Նախարարության գործունեության տարեկան և ընթացիկ գործունեության ամփոփ հաշվետվությունների կազմման գործընթացին,

22. իրականացնում է Վարչության աշխատանքային ծրագրերի ու Վարչության կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունների կազմում:

**Իրավունքները՝**

- ջերմոցային գազերի արտանետումների կառավարման, ինչպես նաև կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության ոլորտի իրավական դաշտում ի հայտ եկած խնդիրների, բացերի վերացմանն ուղղված առաջարկություններ ներկայացնել վերադասին,
- ուսումնասիրել միջազգային փորձը և դրա ներդրմանն ուղղված առաջարկություններ ներկայացնել և քննարկել,
- մասնակցել աշխատաժողովներին, քննարկումներին այլ գերատեսչությունների մասնագետների, միջազգային փորձագետների հետ,
- շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ներկայացված նախագծերի ուսումնասիրության արդյունքում վերհանված ոլորտային

անհամապատասխանությունների վերացման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնել և քննարկել,

• սահմանված կարգով ներկայացված վիճակագրական հաշվետվությունները (հարցաթերթեր, տեղեկանքներ և այլն) ուսումնասիրել և վերլուծել, հավաքագրված տվյալների ու տեղեկությունների հիման վրա վարչական վիճակագրական ռեգիստրների վարման ընթացակարգերի վերաբերյալ կլիմայի փոփոխության մասով առաջարկություններ ներկայացնել, քննարկել,

• կատարել կոնվենցիաների պարտավորություններից բխող աշխատանքներ:

**Պարտականությունները՝**

• ջերմոցային գազերի արտանետումների կառավարման, ինչպես նաև կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության ոլորտում առկա բացերը և անհամապատասխանությունները շտկելու, օրենսդրական դաշտը կատարելագործելու նպատակով ռազմավարական փաստաթղթեր, իրավական ակտերի նախագծեր մշակել,

• օրենսդրությամբ սահմանված կարգով շրջանառված նախագծերի վերաբերյալ նախարարության ստորաբաժանումներից և շահագրգիռ գերատեսչություններից ստացված կարծիքները վերլուծել, ամփոփել և քննարկել, անհրաժեշտության դեպքում մշակված նախագիծը լրամշակել, սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել,

• ուսումնասիրել այլ մարմինների կողմից մշակված և Նախարարության համաձայնեցմանը ներկայացված իրավական ակտերի և միջազգային ծրագրերի նախագծերը և տալ կարծիք,

• տվյալ միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների կատարմանն ուղղված առաջարկություններ, տեղեկատվություն տրամադրել,

• միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների կատարմանն ուղղված օրենսդրական դաշտը մոտարկել,

• շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ներկայացված նախագծերը համապատասխանեցնել իրավական ակտերով ամրագրված պահանջներին և նախագծերի վերաբերյալ մասնագիտական եզրակացություն պատրաստել,

• ջերմոցային գազերի արտանետումների հաշվառման համար շահագրգիռ գերատեսչություններից և կազմակերպություններից տեղեկատվություն հավաքագրել, վերլուծել, հաշվառել և սահմանված կարգով ու ժամկետում ներկայացնել,

• իրականացնել Վարչությանը վերաբերող փաստաթղթերի թարգմանություններ,

• սպասարկել Խորհրդի գործավարությունը,

• վարել նամակագրություն Խորհրդի նախագահի, անդամների, միջգերատեսչական աշխատանքային խմբերի, պետական կառավարման և այլ իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ,

• արձանագրել Խորհրդի նիստերը, կազմել հաշվետվություններ, սահմանված կարգով Շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական կայքում հրապարակել արձանագրություններ և հաշվետվություններ, տրամադրել ոլորտը համակարգող փոխվարչապետի գրասենյակին՝ կառավարության պաշտոնական կայքում հրապարակելու նպատակով:

5) Հրամանով հաստատված 450-րդ հավելվածում՝ շրջակա միջավայրի նախարարության կլիմայական քաղաքականության վարչության ավագ մասնագետի (ծածկագիր՝ 15-32.5-Մ4-5) պաշտոնի անձնագրի **«2. Պաշտոնի բնութագիրը» գլխի «2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները»** կետը շարադրել նոր խմբագրությամբ.

## 2. Պաշտոնի բնութագիրը

**2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները**

1. մասնակցում է կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության պետական քաղաքականության, ծրագրերի, ռազմավարությունների, իրավական ակտերի նախագծերի, ուղեցույցների մշակմանը, և դրանց իրականացման գործընթացի ապահովմանը,

2. մասնակցում է կլիմայի փոփոխությանը վերաբերող միջազգային կոնվենցիաներով, պայմանագրերով ու համաձայնագրերով սահմանված դրույթների և պարտավորությունների, դրանց շրջանակներում ընդունված որոշումների կատարմանը,

3. մասնակցում է Կլիմայի փոփոխության հարցերով խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) քարտուղարության գործառույթների իրականացմանը,

4. մասնակցում է կլիմայի փոփոխության վերաբերյալ միջազգային կոնվենցիաների, պայմանագրերի ու համաձայնագրերի նախագծերի մշակմանը,

5. մասնակցում է կլիմայի փոփոխությանը վերաբերող միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների կատարմանն ուղղված մեխանիզմների ներդրման վերաբերյալ առաջարկությունների մշակմանը,

6. մասնակցում է ջերմոցային գազերի պետական հաշվառման սկզբունքների ու կարգերի նախագծերի մշակմանը՝ Կլիմայի Փոփոխության Միջկառավարական Խմբի/IPCC կողմից հաստատված ուղեցույցերի համաձայն,

7. մասնակցում է կլիմայի փոփոխությանն ուղղված միջազգային համագործակցության և միջազգային պարտավորությունների կատարման ապահովմանը, միջազգային պայմանագրերի մշակմանը,

8. մասնակցում է կլիմայի փոփոխության հայեցակարգի և հիմնադրույթների մշակմանը և կատարելագործմանը, ինչպես նաև այդ բնագավառում նորմատիվ բնույթի իրավական ակտերի մշակման վերաբերյալ առաջարկությունների ներկայացմանը,

9. մասնակցում է օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով համապատասխան վիճակագրական հաշվետվությունների (հարցաթերթեր, տեղեկանքներ և այլն) ներդրմանը և դրանց միջոցով հավաքագրված տվյալների ու տեղեկությունների հիման վրա վարչական վիճակագրական ռեգիստրների վարմանը՝ կլիմայի փոփոխության մասով,

10. մասնակցում է կլիմայի փոփոխությանն ուղղված միջազգային ծրագրերի նախագծերի մշակմանը, Նախարարություն ներկայացված ծրագրերի նախագծերի ուսումնասիրմանը, և դրանց վերաբերյալ կարծիքի տրամադրմանը,

11. մասնակցում է կանաչ տնտեսության խթանմանն ուղղված քաղաքականության մշակման ու իրականացման գործընթացին՝ իր իրավասությունների շրջանակում,

12. մասնակցում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտման հետևանքով շրջակա միջավայրին հասցված վնասի հաշվարկման մեթոդների մշակման աշխատանքներին՝ Վարչության իրավասությունների սահմաններում,

13. մասնակցում է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության շրջանակներում Վարչության գործառույթների մասով մասնագիտական կարծիքի տրամադրմանը,

14. մասնակցում է նորմատիվ իրավական ակտերի նախագծերի՝ շրջակա միջավայրի բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման եզրակացության տրամադրման գործընթացին,

15. մասնակցում է էկոլոգիական իրազեկման, մշակույթի, դաստիարակության քաղաքականության, ծրագրերի և ռազմավարությունների, էկոլոգիական գիտության և կրթության ռազմավարության հիմնական ուղղությունների մշակմանը,

16. մասնակցում է այլ մարմինների կողմից մշակված և Նախարարության համաձայնեցմանը ներկայացված իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ առաջարկությունների և առարկությունների տրամադրմանը՝ կանոնադրությամբ Վարչությանը վերապահված իրավասությունների սահմաններում,

17. մասնակցում է Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի՝ շրջակա միջավայրի ոլորտին վերաբերող բաժինների, և կառավարության գործունեության միջոցառումների ծրագրի մշակման գործընթացին,

18. մասնակցում է կլիմայի փոփոխությանն առնչվող շրջակա միջավայրի պահպանության բնագավառում պետական ծրագրերի մշակմանը և պետական պատվերի՝ սահմանված կարգով ձևավորման աշխատանքներին,

19. մասնակցում է քաղաքացիների առաջարկությունների, դիմումների, բողոքների սահմանված կարգով քննարկմանը և պատասխանների տրամադրման գործընթացին,

20. մասնակցում է կանոնադրությամբ Վարչությանը վերապահված իրավասությունների սահմաններում Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի, նախարարական կոմիտեների օրակարգերում ընդգրկված հարցերի ուսումնասիրմանը և ըստ անհրաժեշտության դրանց վերաբերյալ տեղեկանքների կազմմանը,

21. մասնակցում է Նախարարության գործունեության տարեկան և ընթացիկ գործունեության ամփոփ հաշվետվությունների կազմման գործընթացին,

22. մասնակցում է Վարչության աշխատանքային ծրագրերի ու Վարչության կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունների կազմմանը:

**Իրավունքները՝**

- ուսումնասիրել ջերմոցային գազերի արտանետումների կառավարման, ինչպես նաև կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության ոլորտի իրավական դաշտի միջազգային փորձը,
- ներկայացնել միջազգային փորձի ներդրմանն ուղղված առաջարկություններ և մասնակցել քննարկմանը,
- մասնակցել աշխատաժողովներին, քննարկումներին այլ գերատեսչությունների մասնագետների, միջազգային փորձագետների հետ,

• ներկայացնել շրջակա միավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ներկայացված նախագծերի ուսումնասիրության արդյունքում վերհանված ոլորտային անհամապատասխանությունների վերացման վերաբերյալ առաջարկություններ և մասնակցել քննարկմանը,

• մասնակցել կոնվենցիաների պարտավորություններից բխող աշխատանքների կատարմանը:

**Պարտականությունները՝**

• մասնակցել ջերմոցային գազերի արտանետումների կառավարման, ինչպես նաև կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության ոլորտում առկա բացերը և անհամապատասխանությունները շտկելու, օրենսդրական դաշտը կատարելագործելու նպատակով ռազմավարական փաստաթղթերի, իրավական ակտերի նախագծերի մշակմանը,

• մասնակցել օրենսդրությամբ սահմանված կարգով շրջանառված նախագծերի վերաբերյալ նախարարության ստորաբաժանումներից և շահագրգիռ գերատեսչություններից ստացված կարծիքների վերլուծությանը, ամփոփմանը և քննարկմանը, անհրաժեշտության դեպքում մշակված նախագծի լրամշակմանը,

• ուսումնասիրել այլ մարմինների կողմից մշակված և Նախարարության համաձայնեցմանը ներկայացված իրավական ակտերի և միջազգային ծրագրերի նախագծերը և մասնակցել կարծիքի ձևավորմանը,

• տրամադրել տվյալ միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների կատարմանն ուղղված առաջարկություններ և տեղեկատվություն,

• մասնակցել միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների կատարմանն ուղղված օրենսդրական դաշտի մոտարկմանը,

• մասնակցել շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ներկայացված նախագծերի վերաբերյալ մասնագիտական եզրակացության պատրաստմանը՝ իրավական ակտերով ամրագրված պահանջներին համապատասխան,

• մասնակցել ջերմոցային գազերի արտանետումների հաշվառման համար շահագրգիռ գերատեսչություններից և կազմակերպություններից տեղեկատվության հավաքագրմանը, վերլուծությանը, հաշվառմանը,

• տրամադրել դիմում/բողոքներով հայցվող համապատասխան տեղեկատվություն,

• հավաքագրել փաստաթղթեր, կազմել հաշվետվություններ՝ Խորհրդի գործավարության իրականացման համար,

• մասնակցել Խորհրդի աշխատանքային խմբերի, պետական կառավարման և այլ իրավաբանական և ֆիզիկական անձանց միջև նամակագրության իրականացմանը,

• արձանագրել Խորհրդի նիստերը, կազմել հաշվետվություններ, սահմանված կարգով մասնակցել արձանագրությունների և հաշվետվությունների հրապարակմանը,

• իրականացնել Վարչությանը վերաբերող փաստաթղթերի թարգմանություններ:

10/2/2026

X

ԱՐԿԱԴԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Signed by: KHACHATRYAN ARKADI 2901780121

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան